ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզում 2023 թվականի ընթացքում գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում կատարված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզում 2022-2023 թվականների բերքի տակ կատարված հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունները հետևյալն են.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածությունը (հա)		
		2022թ.	2023թ.	Տարբերությունը (+/-)
1	**Աշնանացան հացահատիկ**	12709	17484	+4775
2	**Գարնանացան հացահատիկ**	18822	19066	+244
3	**Հատիկաընդեղեն**	146	131	-15
4	**Տեխնիկական**	80	153	+73
5	**Կարտոֆիլ**	3489	3569	+80
6	**Բանջարեղեն**	1264	1165	-99
7	**Կերային**	9574	9006	-568

2024 թվականի բերքի տակ կատարվել է 13553 հա աշնանացան ցորենի ցանք:

2023 թվականին՝ համեմատած 2022 թվականի հետ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի միջին բերքատվությունը աճել է:

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /ց/	
		2022թ.	**2023թ.**
1.	Հացահատիկ և հատիկաընդեղեն *որից՝*	22.1	22.7
1.1	*աշնանացան ցորեն*	23.9	24.8
1.2	*գարնանացան գարի*	19.7	20.6
1.3	*հատիկաընդեղեն*	12.3	18.9
2.	Կարտոֆիլ	170.6	204.8
3.	Բանջարեղեն	153.6	164.8

Ավստրիական զարգացման գործակալության «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Աշոցքի

համայնքապետարանին տրամադրվել է գերժամանակակից քարհավաք տեխնիկա, ինչը կծառայի համայնքի բնակիչների կարիքների համար:

Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի շնորհիվ, «Հույսի Նշան» միջազգային կազմակերպության և «Կանաչ Արահետ» ՀԿ-ի համագործակցության արդյունքում Ախուրյան համայնքի Հայկական բնակավայրում բացվել է փորձա-ցուցադրական հողատարածք և էներգետիկ այլընտրանքային (արևային) կայան:

«Շիրակ» ՋՕԸ-ի կողմից 2023թ. ջրառը, ջրտուքը, հասույթը, գանձումները և ոռոգված տարածքը հետևյալն են.

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Չափի միավորը
1	**Ջրառ**	27.202	հազ. մ³
2	**Ջրտուք**	9.258	հազ. մ³
3	**Հասույթ**	101.838	հազ. դրամ
4	**Գանձում**	89.856	հազ. դրամ
5	**Գանձման տոկոս**	88	%
6	**Ոռոգված տարածք**	4250	հա

Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման 2023-2024թթ. համեմատական արդյունքները հետևյալն են.

	2023թ.	**2024թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	70082	63507	**-6575**
որից՝ կովեր /հազ. գլուխ/	32356	31530	**-826**
Խոզեր /հազ. գլուխ/	13421	16685	**+3264**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	73674	73522	**-152**
Թռչուն /հազ. թև/	379023	125175 /առանց օժանդակ տնտեսությունների/	-

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների

համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակներում 2023 թվականին մարզում համարակալվել է 75455 գլուխ խ.ե.կ.։

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից մարզի անհատույց տրամադրվել է 1507.81 լ թունանյութ, որի միջոցով մարզի առավել վարակված՝ 18847.6 հա գյուղատնտեսական հողատեսքերում իրականացվել է քիմիական պայքարի միջոցառումներ։

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում շարունակվում են կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները։

Մարզում անասնահամաճարակային վիճակը կայուն է։

իրականացվել է՝

	սիբիրախտ	բրուցելյոզ	էմկար	դաբաղ	դաբաղ SAT 2
խ.ե.կ. /գլուխ	93250	64191	98630	154190	172147
մ.ե.կ. /գլուխ/	2364	30906	-	72589	70173

Իրականացվել է նաև դաբաղ հիվանդության 455 արյան նմուշի շճահետազոտություն։

2023 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում իրականացված պետական օժանդակության ծրագրերի արդյունքների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիր

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար փոխհատուցման բաղադրիչով 1 շահառուի տրամադրվել է ընդհանուր 9.06 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 10 հա հողատարածքում ոռոգման արդիական համակարգ (անձրևացում) ներդնելու համար։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1612-Լ որոշմամբ հաստատված Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 9.65 մլն ՀՀ դրամի չափով՝ ընդհանուր 804.31 քառակուսի մետր արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար: 2022 թվականին պայմանագիր կնքած 2 շահառուի տրամադրվել է ընդհանուր 28.57 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 2363.75 քառակուսի մետր արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1313-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում թվով 6955 շահառուի տրամադրվել է 1.3 մլրդ ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 16602 հա-ի վրա աշնանացան ցորենի ցանքս կատարելու համար:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1305-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում թվով 2 շահառուի տրամադրվել է 7.04 մլրդ ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 200 գլուխ տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերման համար:

5. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի մարտի 29-ի N 327-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր

2023 թվականին 1 շահառու ձեռք է բերել 30 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:

6. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է շահառուների կողմից ներկայացված 3 հայտ 123.0 մլն դրամի չափով, կնքվել է 158 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 10.3 մլն դրամ:

7. ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է շահառուների կողմից ներկայացված 1 հայտ 256.7 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 71.8 մլն դրամ:

8. ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականին՝ նոյեմբերի 30-ի դրությամբ ձեռք է բերվել 30 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 20 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 245.0 մլն դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 58.0 մլն դրամ:

9. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 3185 հատ ապահովագրության պայմանագիր՝ 3642 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: 2023 թվականին՝ նոյեմբերի 30-ի դրությամբ ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 556 ապահովագրական հատուցում՝ շուրջ 173.5 մլն դրամի չափով:

2023թ. ընթացքում Շիրակի մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ կանաչ տարածքների հիմնման աշխատանքներ են իրականացվել Գյումրի, Աշոցք, Անի, Ամասիա, Ախուրյան և Արթիկ համայնքների 27 բնակավայրերում, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 175 հա:

2023թ. ընթացքում մեկնարկել է նաև Մեծ Սարիար բնակավայրում՝ 100 հա, Գյումրի՝ 16 հա, Բավրա՝ 2.5 հա, Սառնաղբյուր՝ 1,5 հա անտառապատման աշխատանքները:

Անտառների հիմնման աշխատանքներ են իրականացվել նաև Հայանտառ ՊՈԱԿ–ի Գյումրու անտառտնտեսության» կողմից մարզի Մեծ Սարիար բնակավայրում՝ 2 հա և Վարդաղբյուր բնակավայրու՝ 10 հա:

Մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ 2023թ. ընթացքում կանաչապատման և դիզայներական ձևավորման աշխատանքներ են իրականացվել Գյումրի քաղաքի թվով 5 դպրոցների և 3 այլ ուսումնական հաստատությունների տարածքներում:

«ԷՅ-ԹԻ-ՓԻ» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի օգնությամբ Շիրակի մարզի Մարմաշեն, Վահրամաբերդ և Քեթի բնակավայրերում ընդհանուր առմամբ հիմնվել են 44 փոքր տնկարաններ, իսկ Գյումրու «Սելեկցիոն» կայանում հիմնվել է 2000 մ^2 մակերեսով ջերմատուն՝ տնկիներ արտադրելու համար, որոնք հետագա տարիների ընթացքում մարզը կապահովեն անհրաժշետ ծառերի տնկիներով:

Վարչության կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության բնագավառում ուսուցողական ծրագրերի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես՝ կազմակերպվել է «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ինտեգրումը մարզային և համայնքային զարգացման ռազմավարություններում» դասընթացները: